Արեւմտեան Հայաստանի Պաշտպանութեան Խորհուրդ

P.O.BOX 8022
La Crescenta, CA 91224 U.S.A.
www.Western-Armenia.org

09.04.2009

Բաց նամակ Հայաստանի Հանրապետության Նախագահ պարոն Սերժ Սարգսյանին

Հայությանը՝ ի դեմս (Արևելյան) Հայաստանի Հանրապետության Նախագահի և Արտ.Գործ.Նախարարի՝ նոր և բարդ փորձություն է սպասվում՝ դիվանագիտական, և այն էլ ամենափորձված և ամենադժվար «հակառակորդի»՝ Թուրքիայի հետ, ով շահավոր է դուրս եկել իրեն պարտադրված բոլոր դիվանագիտական-բանակցային ճակատումներից:

Պետք է արժանվույնս գնահատել Ձեր որոշումը՝ (Արևելյան) Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև բանակցությունների նյութը հայության ներսում՝ Հայաստան և ի սփյուռս աշխարհի՝ քննարկման նյութ դարձնելու մասին՝ հայ-թուրքական բանակցություններում առավելագույն հայանպաստ ընտրանքը հայտնաբերելու համար:

Հայ իշխանավորը պարտավոր է գտնել այն, գոյացնել այն, իսկ հարկ եղած պարագայում՝ ազգավնաս հետևանքը կանխելու նպատակով՝ դուրս գալ «խաղից»:

ԱՀՊԽ-ն իբրև աշխարհասփյուռ վասպուրականցիների, տարոն-տուրուբերանցիների, կարին-էրզրուցիների և համշեն-տրապիզոնցիների Գլխավոր ներկայացուցչական մարմին, անհրաժեշտ է համարում մատնանշել հետևյալը.

Առաջին աշխարհամարտում դաշնակիցների հաղթության գործում հայության ունեցած անասելի նշանակալից ներդրումի, ինչպես նաև հետպատերազմյան դիվանագիտական ակտիվ և արգասաբեր գործունեության արդյունքում Առաջին աշխարհամարտի պաշտոնական ավարտը սահմանող Սևրի Խաղաղության պայմանագրում, և իբրև Միջազգային իրավարար ԱՄՆ Նախագահ Վուդրոու Վուիլսոնի վճռագրում ամրագրվեցին հայության գոյաբանական անհրաժեշտ պայմաններ նախատեսող երաշխիքներ:

Այդ որոշումների կատարումը առկախվել է աշխարհաքաղաքական այլազան պատճառներով:
Առ այսօր դրանց կատարման պարտադիր լինելու հանգամանքը երբևիցե կասկածի առարկա չի եղել:

արձանագրության շարադրանքով (Արևելյան) Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիան կամայական վերաձևում են Առաջին աշխարհամարտի արդյունքը՝ ընդ որում Հայաստանի և համայն հայության համար հոռեգույն հետևանքներով՝ ի հօգուտ Թուրքիայի:
Չքանալու կամ տկարանալու վտանգի տակ են այնպիսի միջազգային իրավական փաստաթղթեր, որոնց կատարմանը տասնամյակներ հույսով և սրտատրոփ սպասել են ու մահացել են միլիոնավոր հայեր:

Հայ, թե ոչհայ ոչ մի պաշտոնյա չի կարող հաշվի չառնել աննպաստ հետևանքների վերբերյալ նույնիսկ ժողովրդային մտավախությունները, իսկ՝ Աստված մի արսցէ՝ ազգավնաս հետևանքների դեպքում, ժողովրդային ցասումից ոչ մի նման պաշտոնյա չի փրկվի:

Ի՞նչ շահեր ու շարժառիթներ են պայմանավորում հայ-թուրքական բանակցային գործընթացը:

Մեծագումար շահերի և աշխարհաքաղաքական ազդեցությունների մասին է խոսքը:

Հայաստանի ապաշրջափակումը իրենց է պետք, դրա համար անհամբեր են:

70 + 20 տարի դիմացել ենք, էլի կդիմանանք:

Եթե դա այժմ չի համապատասխանում մեր ազգային տեսլականին ու մեր ազգային-պատմական ընթացքին՝ պետք է առկախվի:

Ուզում ենք Ձեզ հավատացնել նաև, որ այսօր իրենց հասանելի հնչուն դրամի ակնկալիքով հայ-թուրքական բանակցություններ հրահրող կամ դրանց ծափահարող երկրներն ու կազմակերպությունները անպայմանորեն առաջանալիք շահերի հակասությունների ու հակադրությունների պատճառով իրար են բզկտելու, և ոչ միայն…

Ապագա բախումների և արյունալի հանգուցալուծումների վտանգը պետք է կանխել, ոչ թե նորերը գեներացնել:

Իբրև ԱՄՆ քաղաքացիներ մենք մեր անենախիստ վերաբերմունքն ենք հայտնելու ԱՄՆ իշխանություններին:

Իբրև շահագրգիռ հայրենակիցներ առաջարկում ենք.

Ռուսաստանի հետ պայմանավորվելուց հետո Հայաստանի, Վրաստանի և Ազերբայջանի միջև անմիջապես քննարկման առարկա դարձնել Սևրի խաղաղության պայմանագրի **92 և 89 Հոդվածները**:

Վերջիններիս հրաժարվելու պարագայում դիմել համապատասխան միջազգային ատյաններին:

Այդպիսով կլուծվեն ոչ միայն Արցախի, այլև Ջավախքի, Նախիջևանի և աջափնյա հայկական Աղվանքի հարցերը:

Հայ-թուրքական սահմանների վերաբերյալ հղումներ կատարել միայն Սևրի խաղաղության պայմանագրի և Միջազգային իրավարար՝ ԱՄՆ 1913-1921թթ Նախագահ՝ Վուդրոու Թոմաս Վուիլսոնի 1920թ. նոյեմբերի 22-ի վճռագրի հիման վրա:

Կարսի և Մոսկվայի անվավեր պայմանագրերի դրույթները պարտադրելու փորձի դեպքում անմիջապես դուրս գալ բանակցություններից:

Հայաստանի ապաշրջափակումը իր գին ունի:

Գինը Սևրի խաղաղության պայմանագրի 92 և 89 Հոդվածների և Միջազգային իրավարար՝ ԱՄՆ 1913-1921թթ Նախագահ՝ Վուդրոու Թոմաս Վուիլսոնի կողմից 1920թ. նոյեմբերի 22-ին՝ Սևրի խաղաղության պայմանագիրը ստորագրած պետությունների լիազորության հիման վրա (հոդված 89)՝ հայ-թուրքական անվտանգ սահմանագիծ, իսկ Հայաստանին դեպի ծով ելք սահմանող վճռագրի գործադրությունն է:

Հայ-թուրքական բանակցություններում հայ իշխանավորը պարտավոր է հայօգուտ արդյունքի հասնել. հիմնվելով պատմական իրողությունների և իրավազոր փաստաթղթերի վրա:

Այլ պարագայում՝ ազգավնաս հետևանքը կանխելու նպատակով՝ հայ իշխանավորը կամ պաշտոնյան պարտավոր են դուրս գալ բանակցություններից, դրանք առկախել այնքան ժամանակ, մինչև որ հայտնվի հայանպաստ դրույթները գործադրելու պատրաստակամ և արդար թուրք բանագնացը:

ԱՀՊԽ Նախագահ **Մայքլ Սոսիկեան**
Պետական Քարտուղար **Հակոբ Մկրտչյան**